

Հայ գրականություն

XI դասարան

1.«Յեղին սիրտը» ժողովածուի հեղինակը Դանիել Վարուժանն է՝ գրական ֆիդային, որը «գաղափարին բազմին» վրա վառեց վրեժի ու հայրենասիրության ջահը: Այդ ջահը վառվում է մինչ հիմա և վառվելու է հար ու հավիտյան, քանի ապրում է նրան ծնող ժողովուրդը: Ժողովածուն լույս է տեսել 1909- ին: Այն բաղկացած է բնաբանի դեր կատարող «Ձոն» բանաստեղծությունից, հեղինակի կողմից նախերգանք համարվող «Նեմեսիս» բանաստեղծությունից և «Բագինին վրա » և « Կրկեսին մեջ»:

Գիրքը գրված է 1894-96թ.թ. արյունալի ջարդերի չխամրող ազդեցության տակ: Նեմեսիսը հին հունական դիցաբանության վրեժի աստվածուհին է, որին դիմում է հայրենասեր բանաստեղծը՝իր ժողովրդի հոգում վառելով հայրենասիրության «գաղափարի ջահը»: «Ձոն» բանաստեղծության համար Վարուժանը բնաբան է ընտրել «Ընդ եղեգան փող բոց ելաներ» Վահագնի առասպելի հավերժ բոցեղեն տողը, որից ծնված առասպելական պատանեկիկը վազեց կռվելու վիշապների դեմ: Այս բանաստեղծությունը հայրենասիրության հավատո հանգանակն է, հայ ժողովրդի հարատևության աղոթք- պատգամը: Բնաբանը հենց այդ պայքարի կոչն է հիշեցում. մեր ժողովուրդը ազատության ու արդարության համար պայքարող ժողովուրդ է դեռևս վաղնջական ժամանակներից, և այդ ոգին չեն կարող ընկճել ո՛չ բարբարոս թուրքերը, ո՛չ ցեղասպանությունը, ո՛չ «բարեկամական» շողոքորթ խոստումները: Մնացյալը գրելու ես ինքդ՝ բացահայտելով գրականության՝քո զգացողությունները:

2.Աշնան և թախծի երգիչը անզուգական Վահան Տերյանն է, ով իր իսկ իդեալի նման «սահուն քայլերով, աննշմար» մտնում է մեր հոգիները տիրոջ իրավունքով և «օրհնում ու փառաբանում »է ամենանվիրականը՝ Սերը: «Հրաժեշտի գազելը» Տերյանը գրել է 1916- ի վերջերին: 1917-ի հունվարի 20-ին Տերյանը այն կարդացել է Երևանում՝ ընթերցողների հետ ունեցած հանդիպման երեկոյին: Այդ մասին պատմում է երեկոյին ներկա գտնված Վեսպերը. «Կատարյալ լռության ծոցում մենք լսում էինք Տերյանին: Ասես մահվան չար ուրվականն անցավ հանկարծ դահլիճով և մի նոր տրտմությամբ համակեց բոլորիս...»: Տերյանն առաջին անգամ ընթերցել էր՝ «Հրաժեշտի գազելը»: «Դժգույն բաաստեղծը հագում էր զգույշ, մի ումպ թեյ խմում կամաց և շարունակում ընթերցումը»: Նա պայծառ թախիծով իր սիրտը բացում է աշխարհի դեմ և բաժանման խոսք ասում մարդկանց, բնությանը, բոլոր արարածներին: Նա հաշտվել է անհրաժեշտի հետ, ապրում է դեպի մութ աշխարհ տանող ճամփի սարսափը, սակայն իր սիրով ու հիշատակներով կապված է այս երկրի հետ և միայն մի իղձ ունի՝ հուշ և հիշատակ ունենալ մարդկանց մեջ, բարի հիշվել նրանց սրտում. Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու, Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով:

հրաժեշտի այսպիսի խոսքեր են ասել հայ գրականության գրեթե բոլոր մեծերը՝ Դուրյան, Մեծարենց, Թումանյան, Իսահակյան, Չարենց, Սևակ, Սահյան և այլք:

«...Իսկ աննշան եթե մնա Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
Եվ հիշատակս ալ թառամի, Ա՛հ այն ատեն ես կը մեռնիմ....»

Է՛հ, մնաք բարով, Աստված և արև, Որ կը պլպլաք իմ հոգվույս վերև...
Աստղ մ՛ ալ ես կ'երթամ հավելուլ երկնից...» (Պետրոս Դուրյան):

Բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ կ'մաշի՜
Շըրթունքս են ծարավ միակ համբույրին...

«Տու՛ր ինձի, Տեր, Ուրախությունն անանձնական՝
Ժողվել՝ հոգվույն մեջ ամենո՛ւն, համայնական հոգվույն ամեն մասնիկներուն
մեջ՝ ամեն ժամ»: (Ս. Մեծարենց):

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.

Ու երջանիկ ակունքներին երագուն՝ Պոետները կանչում են ու անց կենում:

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.
Ես եղել եմ , կա՛մ, կլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ...

Ո՛նց է ժպտում իմ հոգին Չարին, բարուն՝ ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս Ու են ճամփիս ամենքին: (Հովհ. Թումանյան)

Կյանքիս նման հեռո՛ւ մարդիկ, անանուն ու անծանոթ,
Ձե՛զ կթողնեմ երգերս այս՝ կյանքս երագ ու կերթամ:

Ու Էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ աչքս է հեռուն... (Ե. Չարենց):

3. Սկրտիչ Պեշիկթաշյան, Հովհաննես Հովհաննիսյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, Համո Սահյան, Հովհաննես Շիրազ և այլք:

4. Լևոն Շանթը հայ գրականության, մասնավորապես թատերգության, անմար փառքերից Է՛ժամանակի հետ միշտ նորացող, միշտ արդիական:
«...Ժամանակը ոչ մեկ ինքնարդարացում չի ընդունիր և ոչ մեկ բացատրություն անոր գլուխը չի մտներ: Ան միայն գործ կպահանջե և հաջողիլ. Իսկ հաջողելու համար անընդհատ աշխատանք է պետք, կամք ու հարատևություն»: Այս է եղել Շանթի համոզումը, որը լավագույնս արտահայտվել է մոտավորապես քառասուն օրում գրված «Հին աստվածներ» (1909թ.) հրաշքը. քութեշով հիվանդ գրողը, արտաքին աշխարհից մեկուսացած, աննախադեպ ներշնչանքով գրեց այս դրաման, որը

հետագայում խմբագրեց ու հղկեց Լոզանում: «Դրամայի մեջ մարդկային ծագումն է, որ աստվածության կձգտի». հենց այս էլ դարձավ դրամայի ներքին ուղղվածությունը: Ճերմակավորի և Վանահոր բախումը, որով սկսվում է դրաման, մարդու հոգևոր երկփեղկվածության բացահայտումն է: Դրաման գրված է խորհրդապաշտական սկզբունքով. Ճերմակավորը Վանահոր անցյալի մարմնավորումն է՝ երիտասարդությունը՝ «գլխաբաց, երկար սև մազերով, ասորական ձևի հյոսված սև ուշքեղ մորուքով», իսկ Վանահայրը՝ «ճերմակահանդերձ- սևազգեստ, սև մազերով-ալեխառն», պարտվում է Վանահայրը՝ ինքն իրեն՝ Ճերմակավորին դժկամությամբ խոստովանելով. «Ճիշտէ: Այդ... եկեղեցին նվիրված է... հին աստվածներուն». Վանահայրը ,ի վերջո, որպես վերջին կռվան, հակադարձում է՝ «Հոն կթագավորե միայն հոգին »: Պարտվում է Իշխանուհին, որովհետև իր Հովհաննեսը չի ուզում «քրքրել մոխիրը», պարտվում է Աբեղան, որովհետև դառնում է Ճերմակավորի կենդանի մարմնացումը և ընդունում է Իշխանի՝ հին աստվածների կանչին արձագանքելու կոչը: Կույրը նույնպես պարտված է, որովհետև տեսնում է ներքնատեսությամբ՝ անսխալ վերարտադրելով Աբեղայի ապրածը՝ ծովի մրկածուփ ալիքների գրկում: Հզոր կենսականի մուտքով խաթարվում է մենաստանի միապաղաղ ու միօրինակ կյանքը, և զգացվում է կենսապաշտ «հին աստվածների» շունչը: Ծովը կյանքն է, կյանքի մեհյանից եկած Սեդայի բազում կերպափոխումներով, ավելի հաճախ կանանց տեսիլքներով, երազներով. Քողավորը լցնում է «ունայնության փոսը». այդ երազները կենսական են. «իջնող մշուշին մեջ աղոտ կնշմարվին կարծես դեմքեր, մարմնի մասեր, ծաղիկ, տերև, կայծեր, գույներ»: Իրականանում է Իշխանուհի Մարիամի կանխատեսումը՝ «այդ եկեղեցին ո՛չ ոք քանդել չի կրնար», որովհետև ավարտվում է ինքնգրկումի ճանապարհը, որովհետև «հին աստվածները» չեն մեռնում: Անընդմեջ է կյանքի ու երազի հակամարտությունը ,և Շանթը հանճարեղ է լուծել այս «անլուծելի» հարցը: Բոլոր հերոսները պարտվում են հաղթելով:

Հանձնաժողովի նախագահ՝

/Ս. Աբազյան/